Սուրբ իմաստութեան կերտներ բռնած:

Օ՛, գեղեցիկ են նկարիչների լոյս պատաստները,  
Ծեսերն՝ անարատ, երգերը՝ թովիչ, լիճը՝ լիալոյս,  
Բարբերը՝ խաղաղ, գիրն՝ անջնջելի,  
Այբբենարանը՝ հրաշանորոգ,  
Եւ ժողովուրդը՝ շինարար ու հեպ՝  
Անապատի մէջ ծաղկած վարդենու նմանողութեամբ:

Միշտ գեղեցիկ են օրհնութեամբ օծուած մեր հիւղակները,  
Անոր ժայռերը եւ լեռնակուտակ տառապանքները,  
Երգերը բոլոր արծաթահնչիւն մեղեդիներով  
եւ Պատարագի խորհուրդը խորին,  
Տպուած ամէնքիս հոգու եւ մտքի կառոյցի վրայ:

Ո՛վ իմ ժողովուրդ, որդիներ իմ քաջ,  
Տեսնում եմ՝ ահա ձեր հոգու խորքում  
Փոքրիկ դրախտ էք կառուցել լոհն  
Մի փոքրիկ աշխարհ բոնութեան համար անմերձեայի,  
Եւ սպասում էք, որ լոյսը ծագի բոլոր կողմերից,  
Օրհնեալ է Աստուած:

\*\*\*

Ձեր ծերունապարզ հայրերին սիրէք,  
Որ նոյնը անեն ձեր որդիները երբ դուք ծերանաք,  
Ամէն երեկոյ ձեր որդիներով երգեցէք խաղաղ  
Եւ երեքմատնեայ խաչակնքումով քնեցէք հանգիստ  
Եւ յաւիտեանք, որ արեգակը  
Ձեր հրամանով չէ, որ ծագում է:

Եթէ ձեզանից օգնութիւն խնդրեն,  
Ընծայմատոյց ձեռք մեկնէք իսկոյն  
Եւ պարգևեցէք ինչ որ կարող էք.  
Նաեւ մուրացէք սէր ու կարեկցանք ուրիշ ազգերից՝  
Ձեզանից թոյլերին վերաբաշխելու սուրբ նպատակով:

Ձեր գոյութիւնը մեծ բան չէ իրօք,  
Քանի որ Աստուած անցաւ ձեր մօտով,  
Եւ դուք չտեսաք, չնկատեցիք եւ չլսեցիք  
Բարենորոգիչ ոտնաձայնը հին.  
Ուշադիր եղէք, ուշադիր լսէք  
Շուտով ՆԱ նորից կ'անցնի ձեր մօտով.  
Ուշադիր եղէք եւ ձեզ ճանաչէք՝ «Դուք ՆԱ էք, ՆԱ էք»:

Ո՛վ իմ տառապած եւ սուրբ ժողովուրդ  
Արդ լուսանորոգ զգեստներ հագած՝ ասում եմ ես քեզ.  
ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ, որ լոյսը ծագի բոլոր կողմերից,  
Եւ իմաստութեան անձրեւներ տեղան  
Ձեր մշտամոռնոք հոգու եւ մտքի  
Անապատ դարձած դաշտերի վրայ.  
Խոստովանեցէք եւ բազմալոյով  
Խոստովանութեան խորին ծայրերում  
Տեսէք լուսաւոր խորհուրդը նրա  
Եւ ոչ թէ բառի սառն ու քարեղէն պատկերը միայն:

Սթափուէք իսկոյն ճշմարտանման սին երապներից  
Եւ արդարացած սէր քարոզեցէք յանուն հաշտութեան,  
Խոստովանելու վերին շնորհներ յանուն բարութեան  
Եւ զոհամատոյց գիտակցական կեանք՝  
Յանուն բարեմիտ, թոյլ ու անպաշտպան արարածների:

Միշտ ուրախ եղէք, քանի դեռ կուծր  
Ձրի ճամբէքին չի բախուել քարին եւ չի փշրուել,  
Քանի ծաղկում են ծիրանների լեռան շոք բոլոր,  
Միշտ ուրախ եղէք, միշտ ուրախ եղէք:

Երջանիկ եղէք, որ թշնամիներ ունէք ձեր դիմաց,  
Ատողներ ահեղ եւ հալածողներ ահեղամոռնչ,  
Նրանց միջոցով դուք ճանաչեցիք ճշմարտութիւնը  
Եւ տառապանքի ահեղ զօրութեամբ դարձաք իմաստուն:

Դուրս եկէք տնից, դաշտերը հերկէք,  
Մեր նախահայր բազմել է գահին Սուրբ Լեռան վրայ,  
Փառք տուէք Աստուծուն նրա հետ մէկտեղ,  
Անապատները մաքրեցէք ծանգից  
Եւ փոխարէնը ծառեր տնկեցէք՝  
Բարութեան բերքի ակնկալութեամբ:

Ձեր տան պատերը վարդարեցէք սիրոյ կանաչ գոյներով,  
Լոյս իմաստութեան շքամուտքերին  
Ծիածանապարզ պսակներ դէք  
Եւ բարձրահայեաց հայոց լեռների լոյս գագաթներին  
Հոգեւոր երգի տաճարներ շինէք՝  
Յանուն Աստուծոյ եւ յանուն մարդկանց:

Ո՛վ իմ տառապած եւ սուրբ ժողովուրդ,  
Բիրակերպարան մարդիկ բազմատանջ եւ ամէն ազգի  
Սթափուէք իսկոյն ճշմարտանման սին երապներից  
Եւ ողջազուրուէք հարապատի պէս,  
Քանի սին տեղ, ամէնքի հոգում նորից գարուն է:

Նայէք երկնքի սրբապատկերին՝ էլ ամպեր չկան,  
Դաշտերի վրայ լոյս պարտէպներն են նորից կանաչել,  
Ջինջ գետակների ձայնն է կարկաչում լեռների վրայ,  
Եւ կակաչներն են մեղմիկ օրորում սարալանջերին:

Երգասաց մայրեր, երգե՛ր հիւսեցէք  
Եւ երգէք ձայնեղ՝ բարութեան բերքը հասունացել է,  
Բոլոր տների դռները բաց են Արեւի դիմաց,  
Եւ վերացել են ճանապարհներից պատնէջ ու պարիսպ:

Երկնային հաւքեր, իջէ՛ք դաշտերին ռստրդներ չկան,  
Մարգարէամիտ, շինարար ազգեր,  
Սիրոյ Տաճարը վերաշինեցէք,  
Քանի ձեր կեանքի այգեստանները  
Պողաբերութեան զգեստներ հագան:

Նորապսակներ, ողջազուրուեցէ՛ք եւ լսէ՛ք, լսէ՛ք՝  
Աքաղաղները լոյս տանքներին  
Ազդարարում են բարի առաւօտ,  
Աղանիները բոյն են կառուցում ժայռերի վրայ,  
Եւ թռչունները ծիածանների կամարների տակ  
Ճախում են խաղաղ լոյսի հմայքից:

Արեւի սիրուց նունենիները վառման գոյն ունեն,  
Արեւածաճանջ նրանց ճիւղերին լոյսն է կանաչել,  
Անտառն արբել է ծիրանների ծաղկած բուրմունքից,  
Էլ մորէի չկայ,  
Ժայռի կատարին վառն է աղօթում,  
Ամպերի ձերմակ վերարկու հագած Աստուած է վկայ:

Հանգիստ քնել են հնձուրներն ամէն՝  
Հնձած խոտերի խրճերին պառկած,  
Եւ համատարած մահուան մրրիկը  
Անցել է վաղուց, հառաչանք չկայ:

Յանկապատի մօտ շիկնել կարօտից  
Ու պար են բռնել սիրահարները,  
Եւ բազմալոյով լեռների վրայ  
Ծլարակել է ճնձողիկները:

Ձմեռն անցել է, մէգ ու մառախուղ այլեւ չկայ,  
Վերադարձել են վաղուց հալածուած այծեամ ու եղնիկ,  
Եւ են նահանջել չարի գնդերը մրցապարտչից,  
Եւ բաց են բոլոր դուռ ու լուսամուտ հիւրերի առաջ:

Անձրեւներն անցան, դաշտը հերկել են շինականները,  
Եւ արտասուում են ուրախութեան մէջ  
Խաղողի այգու դալար շիւերը:

Համարձակ կանգնէք միմեանց դիմաց՝ վախը անցել է,  
Բարի լոյս անէք, ողջազուրուեցէ՛ք՝ բանասիրու չկայ,  
Յանցանքով հպարտ ազգամոյների դարը անցել է  
Ժպտացէք իրար ցաւ ու տառապանք սպիացել է:

Լեռան լանջերին չորուկ ծառերը  
Ծաղկել են սիրոյ առատութիւնից,  
Ծաղիկների մէջ ձերմակ գառնիք  
Մայրում են ձայնեղ զարնան կարօտից  
Կանաչ գորգերին փոռած են կանաչ անկողինները,  
Եւ նրանց գրկում անուշ քնած են լոյս մանուկները:

Ո՛վ իմ ժողովուրդ, որդիներ իմ քաջ,  
Սթափուէք շուտով ճշմարտանման սին երապներից  
Եւ հաւատացէք, որ դուք հոգի էք եւ ոչ թէ մարմին,  
Յաւերթութեան մէջ դուք լոյս էք, լոյս էք եւ զարնան  
անձրեւ:

Ողջ Տիեզերքը լցուած է լոյսով եւ ուրախութեամբ.  
Տիեզերական լոյս տարէք բոլոր  
Անգէտ ու անբան արարածներին  
Եւ կործանեցէք սուտ ու կեղծիքի կառոյցն այն կարմիր  
Սիրոյ զօրութեամբ եւ ոչ թէ կէնքով:

Երգեր հիւսեցէք եւ նկարեցէք պատկերը լոյսի,  
Պատկերը մարդու աստուածանման,  
Արարչանուէր երգեր երգեցէք  
Եւ շարականներ՝ անցած դարերի  
Եւ ո՛չ մի յանցանք ծածուկ չպահէք  
Անհատաւ ազգի նմանողութեամբ:

Նայէք ջրերին, ծովերին զուարթ,  
Այնտեղ ձկներն են խայտում մեղմօրէն, ձկնորսներ չկան,  
Նայէք կապոյտին, կանաչին շէնշող  
Նրանց երկնային պատկերի վրայ Արեւն է բազմել՝  
Ողջ Տիեզերքի սիրուց հմայում,  
Ձանգակներն ամէն մեղմ ղօղանջում են  
Տիեզերական ներդաշնակութեամբ,  
Եւ զոհամատոյց ուխտարներն են աղօթում խաղաղ  
Նարեկայ վանքի կանաչ խորանում՝  
Սուրբ պատարագի զգեստներ հագած:

Օ՛, գեղեցիկ են հայոց լեռները՝  
Աստուածաբնակ սուրբ տաճարների նմանողութեամբ,  
Եւ գեղեցիկ են հայր-աստուածները

# Ս. Ծնունդի Մայրնուքի Ծնունդ

## ԽԱԲԵՈՒԹԻՒՆ

«ՏՈ ՆՈՒ ԵՆՈՐԵ ԹԱՅԱԶ» ԹԵՐԹԻՆ ՀԱՍԱԶԱՅՆ, ՄԻԱՅԵԱԼ ՆԱԿԱՆՈՒՄԵՐՈՒ ՄԵՋ Ս. ԾՆՈՒՆԴԸ ԿԸ ՂԱՂՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՏՕՆ ՄԸ ԸԼԼԱԼԷ, ՅԻՃԵՑՆԵԼՈՎ ՉԱՐԼՁ ՏԻՔԸՆԶԻ «Է ԲՐԻՍՍԱՆ ԵՐԵՐԸ» ԿԵՊԻՆ ԺԼՍ ԵՒ ԱՆՏԱՐԵՐ ՏԻՊԱՐԸ

Երբ Ալեքս եւ Քերոն կրահամ արտասահման կը բնակէին, անոնք պարտաւոր կը զգային Դեկտեմբերին Հիւսիսային Ամերիկա վերադառնալ, իրենց ընտանիքները տեսնելու համար: Հետեւեալ արտարի, երբ անոնք դարձեալ վերադարձան, կ'երեւակայէին, թէ ընտանիքը Ս. Ծննդեան տօնին առիթով պիտի հաւաքուէր Նիւ Եորքի մօտակայ իրենց բնակարանին մէջ: Սեօ հայրը որ մեծ մայրեր հեռաւոր տեղերէ պիտի ժամանէին օդանաւով եւ ուրախ պիտի ժողովէին, մինչ իրենց երկու աղջնակները նուէրներ պիտի բանային՝ խանդավառութեամբ պատուներով գունազեղ թուղթերը:

Սակայն, երբ կրահամ ամուլը իրենց ծնողները հրաւիրեց Ս. Ծնունդը միասին անցընելու, 5 մեծ հայրեր եւ մեծ մայրեր (անոնց շարքին՝ վերամուսնացածներ) մերժեցին ընդառաջել: Կրահամի մայրը դահուկեղու պիտի երթար Պրիմիթ Գորմուպիտ, Նոյնիսկ երբ ամուլը զայն զգուշացուցած էր, թէ այս տարի ձիւն չկար: «Իրմէ խնդրեցինք, որ գայ եւ կաղանդ Մամայի դեր ստանձնէ իր թոռներուն համար, սակայն յայտնապէս ան նախընտրեց երթալ եւ տեսնել, թէ խոտը ինչպէս կը բուսի Ուիսլըրի մէջ, կ'ըսէ Կրահամ: Իրենց մագրուն մէջ աղեղնաձեւ ծամակալներով երկու աղջնակներու գրաւուածութիւնը անբաւարար է տօնական այս օրերուն»:

Ընդարձակ տարածութիւններու վրայ ցրուած բազմանդամ ընտանիքներու մէկտեղումը հետզհետէ հազուադէպ երեւոյթ կը դառնայ Ս. Ծնունդի օրերուն: Շատերուն համար այս տօնը այլեւս կաղանդի ծառին եւ հնգկահաւի սեղանին շուրջ հաւաքուելու կամ Ս. Ծնունդի երգեր երգելու առիթ մը չէ: 20էն 30 տարեկան ամուրի երիտասարդներ եւ երիտասարդուհիներ իրենց ծնողներուն կ'ըսեն, թէ Ս. Ծնունդը տան մէջ պիտի չանցընեն: Մեծ հայրեր եւ մեծ մայրեր կը յայտարարեն՝ մի՛ ապակինք մեզի: Ամուրի գաւակներ կը բացատրեն, թէ այլեւս ձանձրացած են Ս. Ծնունդի ականակալ մէկտեղումներէն եւ մանկուծի անդամներու ստանձնումէն, որ անխուսափելի է, երբ ամէն ոք կ'վերադառնայ ընտանեկան ծիրը: Բժշկական աւելի հոգածու

խնամքի արժանանալով՝ բազմաթիւ մեծ հայրեր եւ մեծ մայրեր այլ ձեւերով կ'ուզեն անցընել Ս. Ծնունդը: Ծնողներ կ'ըսեն, թէ չեն ուզեր իրենց զաւակներն ու անոնց նուէրները ինքնաշարժին մէջ լեցնել եւ քշել գետերէն ու անտառներէն անդին, կամ աւելի գէշ՝ օդանաւով թռիլ Շիքակոյի միջազգային օդակայանէ: «Չես ուզեր մեծ մօրդ քով երթալ, մեծ մայրդ չ'ուզեր քովդ գալ, կ'ըսէ Մինեսոթայի համալսարանէն դասախօս մը՝ Քարալ Էնի Մարլինկ, որ հեղինակն է «Մերի Գրիսմը. սեւը պրէյթիկ Ամերիքացի կրէյթէսը հոլիւտէյ» գիրքին: Բազմադարձ ընտանիքներու մէջ լուրջ փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ. ընտանիքի անդամներ այլեւս չեն մէկտեղուիր մէկ յարկի տակ»:

Մարլինկի համաձայն, այս տարի բազմաթիւ պատճառներ խանգարեցին ընտանեկան Ս. Ծնունդը, որ գուզադիպեցաւ շարժուան կիսուն: Աւելին. օդանաւային ընկերութիւններ տակնուվրայ վիճակի մէջ էին, իսկ Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքներէն ետք վարանումները տակաւին կը շարունակուէին:

Այսուհանդերձ բազմաթիւ ճամբորդական ընկերութիւններ բարեկալում մը կը նկատեն անցեալ տարուան բաղդատած: Ծամբորդական «Թրիվլը Պաուստ» ընկերութեան Դեկտեմբերի վաճառքը 30 առ համեմատութեամբ բարձրացած է 2000ի Դեկտեմբերի վաճառքին բաղդատած, իսկ անցեալ տարուան բաղդատած՝ 1,9 առ հարիւր համեմատութեամբ մագրուցում արձանագրուած է: Թեքսասի մէջ ձոն էնտրի, ռատիոյով մը, այս տարի Ս. Ծնունդի առիթով աւանդաբար չ'վերադարձաւ իր պապեանկան տունը, նախընտրելով իր կնոջ եւ երկու աղջնակներուն հետ հեծիկ քշելու երթալ Բամպուտիոյ եւ Վիբիանայի մէջ: Անոր ընտանիքը խառն զգացումներով դիմաւորեց

որոշումը:

«Շատ աւանդապաշտ ընտանիք մըն ենք, կը սիրենք Ս. Ծնունդը եւ մէկտեղումը, կ'ըսէ Էնտրի: Պարզապէս նաեւ կը սիրենք ճամբորդել եւ մեր ժամանակը սահմանափակ է: Բազմաթիւ վայրեր կան, զորս կ'ուզեմ ցոյց տալ զաւակներուս»:

Պարպարա Տասէք (60 տարեկան) եւ անոր ամուսինը՝ Տոն (62 տարեկան) տարիներէ ի վեր Ս. Ծնունդի առիթով հեծիկ քշելու կամ լեռները քալելու կ'երթան, 26 եւ 34 տարեկան իրենց զաւակները առանձին ձգելով Մասաչուսէթի եւ Թեքսասի մէջ: Այս տարի անոնք պիտի ճամբորդեն կալիֆորնի կղզիներ:

«Տարուան ընթացքին աշխատանքի տարողութիւնը այնքան ծանր կը ճնշէ մեր վրայ, որ արձակուրդ առնելու կարիքը կը զգանք ոչ միայն գործէն, այլ նաեւ՝ ընտանիքէն, կ'ըսէ Տասէք: Այս չի նշանակեր, թէ մեր գործին եւ ընտանիքին դէմ հակադրուած ենք, սակայն կ'ենթադրեմ, որ աւելի լաւ վերաբերում պիտի ցուցաբերենք մեր շրջապատին նկատմամբ, եթէ կարենանք հոգ տանիլ մենք մեզի»:

Ուրիշներ կը նախընտրեն պարզապէս չճամբորդել:

«Սարսափելի է, սակայն որքան տարիք մեծնայ, այնքան պարտականութեան պէս կը թուի Ս. Ծնունդը ընտանիքին հետ անցընելը», կ'ըսէ Նիւ Եորք քաղաքէն 39 տարեկան արւեստարան մը՝ ձոն Սլաթթըրի:

Ան կը բացատրէ, թէ Ս. Ծնունդը Բանատայի մէջ կը ընտանիքին հետ անցընելու համար շատ սուղ կը վճարէ, եւ թէ՛ նոյն գինով կրնայ օդանաւի տոմս մը գնել եւ երթալ Եւրոպա կամ Հարուայ: Հետեւաբար ան որոշած է չճամբորդել եւ Նիւ Եորքի մէջ ընթրել իր բարեկամներուն հետ, որոնք իրեն պէս կը նախընտրեն Ս. Ծնունդի «որբեր» մնալ: «Իրականութիւնը այն է, թէ բոլոր բարե-

կամներս նոյն տպաւորութիւնը ունին, կ'ըսէ ան: Ս. Ծնունդէն քանի մը օր ետք խանդավառութիւնը կը ցնդի: Բոլոր նուէրները, վիտեռները եւ սանուկները սովորական կը թուին, եւ կը սկսիս հարց տալ. ի՞նչ կ'ընեմ այս քաղաքին մէջ»:

Սիէթլի մէջ իրաւական մարզին մէջ աշխատող քարտուղար մը տարիներէ ի վեր Ս. Ծնունդը Տաքոթայի մէջ իր ծնողներուն հետ չէ անցուցած: Սակայն այս տարի առաջին անգամ ըլլալով է, որ ընտանիքը որեւէ տեղ չէ մէկտեղուած: Ան կ'ըսէ, թէ իր ընտանիքին հետ անհամաձայնութիւններ չունին: «Եթէ ուզեմ ընտանեկան կեանք մը ապրիլ, կրնամ իրականացնել զայն, կ'աւելցնէ ան: Պարզապէս մարդիկ ծանր ճնշումի տակ կը դնեն իրենք զիրենք, ահնկալելով, որ անպայման ներկայ ըլլան ընտանեկան մէկտեղումին: Ունիմ բարեկամներ, որոնք երբեք պիտի չուզէին իրենց ընտանիքին հետ անցընել Ս. Ծնունդը, սակայն ամէն պարագայի տեղի կու տան»:

«Այս ճնշումը ինքնին յուսախարութեան կ'առաջնորդէ, կ'ըսէ Էնտրի: Կը կարծեմ, թէ ամէն ոք քնքուշ զգացումներ կ'ունենայ Ս. Ծնունդի օրերուն, եւ երբեմն պայմանները չեն նպաստեր: Ամէն ոք ծանր ճնշումի տակ կը զգայ ինքզինքը. օգակայանները կը խնդրէին, հեւ ի հեւ կը վազվզէին, ամբողջ վիճակը չի պարզուեր այն գոհունակութիւնը, որ կ'ուզէիր կամ ծրագրած էիր»:

Տասէք կ'ըսէ, թէ ինք եւ իր կինը նախընտրած են խուսափիլ Ս. Ծնունդեան տօնին առեւտրականացումէն եւ իրենց թոռներուն նուէրներ բանալու «Ս. Ծնունդի քառսէն»:

«Այնքան ալ հաճելի չէ թոռներուդ հետ ըլլալ, երբ անոնց ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած է նուէրներու եւ խաղալիքներու վրայ», կը բացատրէ ան:

## ՏՕՆԱԿԱՆ ՔԱՂՅՐԱՒԵՆԻՔԻ ՄԵՂԱՒՈՐ ՄԱՐՄԱԶԸ

ԻՆՉՈՒ ԶԱԵՐԱՐ ԿԱՂԱՆԻ ԱՆԻԹՈՎ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԿԸ ՄԱՏԵ ՄԵՋ: ԶԱՂՅՐԱՒԵՆԻՔՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳԻՐԵԻ ՄԸ ԸՆԴՈՒՆԱԿԸ՝ ԹԻՍ ՌԻՉՈՐՏԱՆ ԸՆՏԵՒԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒ ՏԱՅ «ՏՈ ՆՈՒ ԵՆՈՐԵ ԹԱՅԱԶ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ

Մարդիկ ընդհանրապէս ամբողջ տարին կ'անցընեն չափաւորելով տուրմի եւ քաղցրեղէնի իրենց մարմալը, պարզապէս սանձը կորսնցնելու համար Ս. Ծննդեան եւ Նոր Տարուան օրերուն: Անշուշտ քաղցրաւենիքները գերագոյն գոհունակութիւն պարգեւող ուտելիքներ են, սակայն կրօնական լրջախոհութեամբ յատկանշուած այս տօնին առիթով անոնք յաւելեալ գրաւութիւն մը ունին, որովհետեւ արգիլուած հաճոյք մը կ'ընձեռեն: Քաղցրաւենիքին պարգեւած գոհունակութիւնը որոշ մակարդակի վրայ բնախօսական է: Բժշկագիտութեան պատմութեան մէջ շաքարը մինչեւ վերջերս ընդհանրապէս օգտակար կը համարուէր: Տուրմի նման քաղցրաւենիք մը կը պարունակէ գոհունակութեան զգացում պարգեւող նիւթեր, ինչպէս՝ քեոպրոմիլին եւ ֆենիլէթիլամին, նաեւ՝ քաֆեին: Հոգեբանական առումով եւս հաճելի է շաքարի կտոր մը բաժնելը իբրեւ սիրոյ արտայայտութիւն:

Քաղցրաւենիքները կը կամրջեն մշակութային եւ կրօնական վիճեր: Հին եւ արդի քաղաքակրթութիւնները գանոնք օգտագործած են տօնախմբութիւններու եւ արարողութիւններու առիթով: Անոնք խոհանոցի արուեստին անխիստական տէրերն են եւ ընդհանրապէս խուսափած են կրօնական հետապնդումէ:

Իրօք, կրօնաւորներ եւ սրբազան մարդիկ (նաեւ կիներ) պատմութեան մէջ ծանօթ են քաղցրաւենիքի նկատմամբ իրենց մակարութեամբ: Քրիստոնէական աշխարհին մէջ հռչակաւոր է թամբ Աթուրիանսի այն յայտարարութիւնը, թէ քաղցրաւենիքները ճաշ չեն, հետեւաբար կարելի է գանոնք ուտել առանց ծոմը խանգարելու:

Քաղցրաւենիքին սրբազան դերը միայն քրիստոնէական եկեղեցիին յատուկ չէ: Եգիպտոսի սուլթանները իրենց խոհարարներուն կը պատուիրէին շաքարէ հսկայական բերդեր շինել Ռամատանի առիթով: Խնձորէ մը ետք անոնք կը բաժնուէին աղբատներուն:

Սակայն քաղցրաւենիքին տօնական դերը կարեւորութիւն կը ներկայացնէ ամէնէն աւելի Հնդկաստանի մէջ, եւ մասնաւորաբար՝ Պենկալին: Կ'ըսուի, թէ հինուու սաստուկներն ու սաստուկները կը սիրեն քաղցրաւենիքները: Այս պատճառով սրբազան տօներու առիթով շաքարի առատութիւն կը տրիէ: Հինուու սաստուկներէն ամէնէն աւելի փիղի գլուխով Վինաիքան կը սիրէ գայն: Անոր տաճարը այցելողները կը մատուցեն կաթով շինուած կլոր լատուսներ, զորս Վինաիքան կ'ընդունի ծիսատեսարանութեան ճամբով, որմէ ետք անոնք օրհնուած կ'ըլլան եւ մատուցողը ազատ է ուտելու գանոնք: Քրիստոնէական աշխարհին մէջ տօնական այս օրերուն ամէն անկիւն իրեն յատուկ քաղց-

րաւենիքով կը հպարտանայ: Սպանիոյ մէջ բուրգոն կամ նուկան կը պատրաստուի վալենսիա քաղաքին մօտակայ խիխոնա շրջանին մէջ: Գերմանիոյ մէջ մարգիփանը կու գայ Լուպէթէն: Հունգարացիք կ'ըմբռնեն գաւլոնգրոքը՝ Ս. Ծննդեան շաքարը, իսկ մալթացիք՝ շաքար ջուրով, մեխակով եւ նարինջի ու կիտրոնի տաշտով լեցուած մածուցիք քաղցրաւենիքը: Գոլոթիւն ունի նոյնիսկ անոր պատրաստութեան նուիրումը Ս. Ծննդեան երգ մը:

Միացեալ Նահանգներու մէջ Ս. Ծննդեան տօնին առիթով կը տիրապետէ շաքարէ ցպիկը: Բազմաթիւ պատմութիւններ հիւսուած են անոր ծագումին վերաբերեալ: Սակայն ոչ ոք վստահ է, թէ առաջին շաքարի ցպիկը ուր եւ երբ շինուած է, կամ ով շինած է գայն:

Կը թուի թէ ամէն տեսակ պատկերներով շաքարներ շինուած են: Նոյնիսկ Ս. Ծննդի տեսարանը շաքարով վերարտադրուած է: Միջնադարեան Եւրոպայի մէջ եկեղեցիներով կու տար, որ մարգիփանով (շաքարի, ձիւթի եւ ջուրի խառնուրդ) նման տեսարան մը պատկերուէր: Անիկա թագաւորի մը կամ եպիսկոպոսի մը Ս. Ծննդեան խնձորին մէջ կեդրոնական տեղ կը գրաւէր:

Երբ մանուածապատ նրբութիւններով պատրաստուած քաղցրաւենիքներուն նորոյթը անցաւ, անոնք փոխարինուեցան աւելի համեստ նիւթերով, որոնք ծանօթ էին իբրեւ մարշիվան (մարգիփան բառին հին ձեւը): Աւելի պարզ ձեւով զարդարուած այս քաղցրաւենիքները կը պատկերէին խորհրդանշական կամ տարուան եղանակներուն յատուկ տեսարաններ: Հոսկէ ծնունդ առած է պտուղներով կարկանդակը, որ կը զարդարուի գանազան տիպարներով, եւ կը պատուի մարգիփանի խաւի մը վրայ ծեփուած շաքարի սառույցով: Անիկա կը հրամցուի Ս. Ծննդի եւ հարսանիքներու առիթով:

Դժբախտաբար քաղցրաւենիքները ըմբռնելու մեր հաճոյքը (եւ ոչ միայն Ս. Ծննդի առիթով) վերջին տարիներուն խափանուած է բժշկագիտական այն տեսութեամբ, թէ շաքարը հիմնականօրէն վնասակար նիւթ մըն է: Մինչդարձ տները քաղցրեղէնը պատասխանատու կը նկատեն սրտի հիւանդութիւններու, շաքարախտի, սոնքութեան, գերաշխուժութեան եւ բազմաթիւ այլ հիւանդութիւններու:

Թէ եւ այս տեսութիւններէն շատերը վերջերս հարցականի տակ առնուեցան եւ վերատեսութեան ենթարկուեցան, սակայն գրեթէ ոչ մէկ ձեւով անոնք կը վնասն այն վարկածը, թէ շաքարը վնասակար է: Անոնք պարզապէս կը ծառայեն աւելի շեշտուելու յանցանքի այն զգացումները, որոնք արդէն կ'ընկերակցին մեզի, երբ քաղցրաւենիք կը սպառուի: Սակայն թերեւս ճիշդ այս պատճառով անոնք այսքան համեղ են:

## ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ՝ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՓՈԽԱՐԷՆ

Բրիտանիոյ Ուոլսոյ շրջանին մէջ եկեղեցի մը, որ ստիպուած էր փակել իր դռները երկրաշարժի պատճառով, կաղանդի լուսաւոր ծառ մը պարգեւ է իր վտանգուած գանգակատան տեղ, Ս. Ծնունդի գիշերը հաւատացեալներ ներգրաւելու համար:

Երբ Կաղանդի մը ետք: Թեմական բանբեր մը «Պի. Պի. Սի.»ի հաղորդած է, թէ Ս. Ծննդեան օրը կէս գիշերին եկեղեցիին գանգակները պիտի չօղջան զանգակներ, որովհետեւ անոնց թրթռացումը կրնար յաւելեալ վնաս պատճառել գմբէթին:



«Կը յուսանք, որ Ս. Ծնունդի գիշերը վառող լոյսերը նշան մը պիտի ըլլան, թէ Աստուծոյ լոյսը իջած է երկիր, եւ հաւատացեալները աղօթքի պիտի հրաւիրեն», յայտարարած է ան:

## 50 ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ ՆՈՅՆ ԲԱՑԻԿԸ

Բրիտանիոյ մէջ երկու բարեկամներ կէս դարէ ի վեր Ս. Ծննդեան նոյն բացիկը կ'ուղարկեն իրարու: Նորմա Բագընզ (88 տարեկան) եւ ձոն Ալսթըն (64 տարեկան) քանի մը էջեր աւելցուցած են բացիկին մէջ, որովհետեւ գրելու տեղ չէ մնացած:



Սաֆոքի եւ Նորթոքի միջեւ երթեկած բացիկը կը պատկերէ շիջող երկու սագեր: ձոն 15 տարեկանին գայն ուղարկած է Նորմա Բագընզի, որուն դրացի էր: Յաջորդ տարի Նորմա գայն ուղարկած է ձոնի, այնուհետեւ անոնք կը փոխանակեն նոյն բացիկը: «Պի. Պի.»ի համաձայն, ճոն սագեր պատկերող բացիկ մը ընտրած է, երբ Նորմայի սագերը իր ազարակը բերուած են, գանոնք

փրկելու համար աղուկի մը ճիրաններէն: Երկու բարեկամները նոյն բացիկը փոխանակած են, նոյնիսկ երբ ձոն երկու տարի ընակած է Աւստրալիոյ մէջ:

Պատրաստեց՝ Լ. ԿԻԷԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնումը հասցնեն հրատարակման թուականը անուղակ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐԸ 5:00:

ՄԱՋԱԶԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչև ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

|           |         |          |
|-----------|---------|----------|
| ԾԱՆՈՒՅՈՒՄ | ՀԱՅՅՈՒՆ | ՓՈՒՆՏԵՐ  |
| ՍԵՏԵՄԲԵՐ  | ՕԿՏԱԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ |

# ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ...

Շարունակում՝ 5րդ էջէն

զաղափար մը պիտի չըլլայ նաեւ, որ պետութիւնը հետամուտ ըլլայ գործող ձեռնարկութիւններու մէջ աշխատանքային բաժնետիրութեան դրուածքներու ձեռքբերման, մանաւանդ որ այս մէկը աշխատանքի խթան հանդիսանալով կը շահագրգռէ նաեւ ձեռնարկատէրը: Ծահագործումները բացառելու մայրուղին շուկայական եւ պետական ներդաշնակօրէն փոխկապակցուած կարգաւորիչ մեքանիզմներու որոնումն է, ընդհանուր տարազի մը տակ: Հոս, պէտք է արձանագրել, թէ ընդհանրապէս լուծուածներ տարու մէջ կազմակերպողը ոչ թէ ընկերվարութիւնն է իբրեւ զաղափար խթանութիւն, այլ անոր տնտեսագիտական միտքը, որ մերժումը եւ համակցութիւնը սխալ երկրորդական մէջ կազմակերպութեան կողմէն: Արդարեւ, ընկերվարութեան համարաչափներն ունենումը կը կայանայ ընկերվարի շեշտաւորման թափանցիկ հոլովոյթի մը մէջ միայն, ուր տարբերութիւնները դանդաղ կազմակերպիչ աշխատանքի հասարակութիւններու եւ անոր բազմազանութեան պայմաններով: Այս բովանդակութեամբ հոլովոյթի մը մէջ, տարածուածութիւն գրաւողը միշտ միջին դասակարգն է՝ ընկերվարի կայունութեան գիտաւոր գրաւականը: Հայաստանի արդիւնաբերական համայնքի ամբողջական վերագործարկման կամ կազմաւորման համար, արտերկրեայ ներդրումները անխուսափելի են, յատկապէս՝ արդիւնաբերական միջոցներու վերանորոգման եւ քաղա-

քական զոյգ հոլովոյթներու խիստ համապատասխանութեան կանոններով, ներդրումներու անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է նաեւ երկրի պաշտպանողական նկատառումներով: Հաստատուած օտար դրամագրութիւններու անվտանգութիւնը կ'ենթադրէ ներդրողներու իսկ կողմէ երկրի պաշտպանողական անխոցելիութեան գծով բաւական աշխուժ շահագրգռութիւն մը: այսպիսով, ներդրումները երկրի մը ապահովական վահանին մէջ կարեւոր ստորագծեր կը կազմեն: Սակայն, այս պայմանաւորումն ամրակայման հասնելու համար, պէտք է երթալ ծայրայեղութեան, այսպէս պետութեան օրինաչափութիւնը կը սկսի հակառակ ուղղութեամբ գործել: տնտեսական ամբողջ բնագաւառներ կրնան պատանդուել օտար երկիրներու կամ անդրազգային մեծ ընկերութիւններու կողմէ եւ տնտեսական համակարգը ընդհանրապէս կրնայ վերածուել այս բոլորի կցորդին՝ միմիայն սահմանափակ ծառայողական գործառնութեան եւ աղբիւրներու (մարդու, հումք) մատակարար դերակատարութեամբ, ինչ որ անպայմանօրէն պետութեան քաղաքական հեղինակագրկուծի կ'առաջնորդէ՝ եւ ներքին, եւ արտաքին ճակատներու վրայ: Այս պատանդումի կացութիւնը կարելի է շրջանցել երեք միջոցներու միաժամանակ կիրառմամբ: ա) ներդրումներու այլազանութեան ապահովում, որով բազմաբեւեռ կախումներ չունենանք տնտեսական ինքնուրույնութեան ու դիւրաշար-

ժուլեան գործունի կը վերածուի, եւ արտաքին տնտեսական ներգործութեան ազդեցութիւնները զիրար կը հակակշռեն: բ) Սփիւռքը մը ունենալու առանձնապատկերներն են օգտուելով պէտք է ձգտել ձեռք բերելու հայկական ներդրումներ, որոնք կարելի տոկոս մը պէտք է կազմեն ընդհանուրին մէջ: գ) Ձեռքբաղանջով պետութեան մը ձախող գործատէր ըլլալու ազա-

տական քարոզչութեան, սեփական աշխուհոյ ձեռնարկութիւններու մէջ պէտք է պահել պետական բաժնեմաս, որ պէտք է ձեռնարկութիւններու գործառնութիւնները վերահսկելի մնան: Ազգային եկամտի կազմակերպման կողմէն, պետական բաժնեմասի գործառնութիւնը աշխատող ընկերային վիճակն ու արտադրանքի սակագինները բանակցելի դարձնողն է:

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ...

Շարունակում՝ 5րդ էջէն

ունի քարիւղի հսկայ պաշարներ: Երկար ընդմիջումէ ետք հիւսիսային իրաքի քիւրտերը վերադարձուցանուած էին իրենց խորհրդարանի նիստը, ընդունելով սահմանադրութիւն մը եւ Բերքուքը յայտարարած էին իբրեւ Բիւրոստանի մայրաքաղաք: Թուրքիա պաշտօնապէս պահանջի ներկայացնելու մը եւ Բերքուքը յայտարարած էին սահմանափակ կ'արժարծէ հիւսիսային իրաքի թիւրքմէններու պարական գործառնութեան եւ աղբիւրներու (մարդու, հումք) մատակարար դերակատարութեամբ, ինչ որ անպայմանօրէն պետութեան քաղաքական հեղինակագրկուծի կ'առաջնորդէ՝ եւ ներքին, եւ արտաքին ճակատներու վրայ: Այս պատանդումի կացութիւնը կարելի է շրջանցել երեք միջոցներու միաժամանակ կիրառմամբ: ա) ներդրումներու այլազանութեան ապահովում, որով բազմաբեւեռ կախումներ չունենանք տնտեսական ինքնուրույնութեան ու դիւրաշար-

նատարներուն եւ իրաքի ընդդիմադիր խմբաւորումներու առաջնորդներուն հետ իրենց հանդիպումներուն ընթացքին բազմիցս քննարկած են հաւանաբար դաշնակցային համակարգ (վարչական եւ ոչ ցեղային բաժանումներու հիման վրայ) ունենալիք իրաքի մէջ թիւրքմէններու իրաւունքներուն հարցը:

Յամենայնդէպս, ըստ երեւոյթին, նախ եւ առաջ Ուաշինկթըն նախնաձախողիք է Սատտամ Հիւսէյնի տապալումէն ետք իրաքի ամբողջականութեան պահպանման: այսուհանդերձ, դէպքերու ընթացքի տարբեր գարգացման մը պարագային, անհավանական չէ, որ Թուրքիա հիւսիսային իրաքի մէջ միջամտութիւն մը կատարէ՝ թիւրքմէնները պաշտպանելու պատրաստուելու վերջոյ, Անգարա 1974ին նոյն պատրուակը օգտագործեց Կիպրոս ներխուժելու համար:

Հայաստանի արդիւնաբերական համայնքի ամբողջական վերագործարկման կամ կազմաւորման համար, արտերկրեայ ներդրումները անխուսափելի են, յատկապէս՝ արդիւնաբերական միջոցներու վերանորոգման եւ քաղա-

### ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5333 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

|    |   |   |   |   |   |   |   |   |    |    |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1  | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 2  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 3  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 4  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 5  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 6  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 7  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 8  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 9  |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 10 |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 11 |   |   |   |   |   |   |   |   |    |    |

- |                                            |                                                          |
|--------------------------------------------|----------------------------------------------------------|
| <b>ԸՆԴՈՒՆՈՒԿԱԿԱՆ</b>                       | <b>ՈՒՂԱՇԱՅԵԱՆ</b>                                        |
| 1. Հաւաքական տնտեսութիւն - ձար:            | 1. Մասնիկ - Ահաւասիկ:                                    |
| 2. Ուրուական - Միջոց:                      | 2. Լարաւոր նուազարան - Այր - Մովարի բաղաբնէրէն:          |
| 3. Փոթոթահամ - Նոյի որդիներէն:             | 3. Մայթ - Կոխ:                                           |
| 4. Մահապարտի պատի:                         | 4. Կորդ - Ինտոնեգիոյ կղզիներէն:                          |
| 5. Այրուբենէն - Մովային - Նմանաձայն գիրեր: | 5. Շաղկապ - Ձախողեցնում:                                 |
| 6. Ռուսիի տեսակ - Քան:                     | 6. Կնքահայր:                                             |
| 7. Արական օտար անուն - Արտաքին պատ:        | 7. Սպասուհի - Ածականակերտ մասնիկ:                        |
| 8. Մուր - Օժանդակութիւն:                   | 8. Կամաւորական Գ. գունդի հրամանատարը - Լեզուով մը՝ տո՛ւ: |
| 9. Վայրի մանր խնձոր - Հասակ:               | 9. Դրկից տառեր - Թիրախ:                                  |
| 10. Դժուարաւ - Ստեփան Շահապի ծննդավայրը:   | 10. Կրակ - Այրուբենէն - Արարական անապատ:                 |
| 11. Ծառիկող - Շրջակայ:                     | 11. Տառի մը անունը - Բցիկ - Երկարաբառ մը:                |

ԹԻՒ 5332

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒԿ

|    |   |   |   |   |   |   |   |   |    |    |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1  | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1  | Ս | Տ | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 2  | Պ | Ո | Ր | Տ | Ն | Մ | Ս | Ս | Ս  | Ս  |
| 3  | Պ | Ո | Ր | Տ | Ն | Մ | Ս | Ս | Ս  | Ս  |
| 4  | Յ | Ս | Ս | Պ | Ս | Մ | Ս | Ս | Ս  | Ս  |
| 5  | Տ | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 6  | Ք | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 7  | Ա | Ր | Կ | Ա | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 8  | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 9  | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 10 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |
| 11 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս  | Ս  |

### ★ Ի՞նչ կ'ըսեն ԱՄՏՂԵՐԸ ★

- ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Պիտի կարեւոր դժուարին հանգրուան մը յաղթահարել եւ յառաջդիմել: Ձեր այս յառաջդիմութեամբ շատ գոհ պիտի մնաք: Օրը ունի դրական ազդեցութիւն:
- ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Ձեր կողակիցին կամ ձեր ընկերոջ հետ խօսեցէք բաց սրտով, անկեղծութեամբ: Այսպիսով կրնաք լուծել ձեր հարցերը: Ծածկամիտ ըլլալը վնասակար է:
- ԵՐԿՈՒՇԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Ձեր աշխատանքին մէջ մթնոլորտը քիչ մը հակասական պիտի ըլլայ: Ձեր կարգ մը պաշտօնակիցները պիտի գարմացնեն ձեզ իրենց անսովոր կեցածքով:
- ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ներդաշնակութիւն պիտի տիրէ ձեր ու ձեր գաւազներուն, նաեւ՝ ձեր հարազատներուն եւ գործակիցներուն միջեւ: Ու ասիկա պիտի տեւէ բաւական երկար: **ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Եթէ ձեր ընտանիքին անդամները կամ ձեր բարեկամները իրենց յանձնարարութիւնը կը յետաձգեն վաղուան, հարցը տրամի մի վերածէք: Համբերութիւնը կեանք է:
- ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Քաղաքավարական այցելութիւն մը տուէք ձեր բարեկամներուն կամ ձեր դրացիներուն: Մարդոցմէ հեռու մնալը այնքան ալ մարդկային չէ: Մարդը մարդով կ'արժեւորուի, ու այս ճշմարտութիւնը պէտք է գիտնաք:
- ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Ձեր աշխատանքը ամէն բանէ կարելի է, նաեւ ձեր հոգեկան հանգստութիւնը: Ոչ որ կրնայ հակառակի ձեր անձնական գործերուն եւ ծրագիրներուն: Ծարուակեցէք աշխատիլ ըստ ձեր կամքին:
- ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Այսօր ամէն ինչ յաջողութեամբ պիտի ընթանայ հրաշալի կերպով: Նոյնիսկ անկարելի ճակատուած հարցեր պիտի իրագործուին: Օրը յարմար է որոշում տալու:
- ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Ձեր հարցերը շատ դժուար կը լուծուին, ինչ որ ուրիշներ զիրարեմբ կ'ընեն նոյն բաները: Այդքան բժանդրութիւն հիւանդութիւն է. պարզացէք:
- ԱՅՄԵՆՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Պիտի յաջողիք ծրագիր մը աւարտել յաջողութեամբ, ճիշդ ժամանակին: Ձեր կարգապահութիւնը եւ պարտաճանաչութիւնը շատ պիտի գնահատուի: Օրը արդիւնաբեր է:
- ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Ձեր աշխատանքը ձեզ բնաւ չի հետաքրքրեր այս օրերուն, ու ձեր ղեկգնորութիւնը կ'արտայայտէ բաց ի բաց: Այսքան դժուարահան մի ըլլաք. յարմարեցէք կացութեան:
- ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Տատ լաւ լուրեր պիտի ստանաք հեռու երկիր ապրող ձեր բարեկամներէն կամ ձեր հարազատներէն: Օրուան ընթացքին ձեր գործերը պիտի կարգադրուին ինքնաբերաբար:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՕՏԵՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

## ԼԻԲԱՆԱՆՅԻ ԳԵՐԱՍԱՆՆԵՐՈՒ ԳԻՄԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Յրանաական Մշակութային Կենտրոնը մինչեւ Դեկտեմբերի ամսաւերը կ'իրաւարէ իր հիւրընկալութիւնը լուսանկարիչ արուեստագէտ Հենրի Պատտուրի լուսանկարներու ցուցահանդէսը, որ կը կրէ «Գեղարուեստի զարգացումը» խորագիրը: Այս ցուցահանդէսը, հաւատարիմ իր խորագիրին, կը ներկայացնէ իր արուեստագէտի լուսանկարները: Մյուս լուսանկարները, որ կը կրէ «Գեղարուեստի զարգացումը» խորագիրը, կը ներկայացնէ իր արուեստագէտի լուսանկարները: Մյուս լուսանկարները, որ կը կրէ «Գեղարուեստի զարգացումը» խորագիրը, կը ներկայացնէ իր արուեստագէտի լուսանկարները: Մյուս լուսանկարները, որ կը կրէ «Գեղարուեստի զարգացումը» խորագիրը, կը ներկայացնէ իր արուեստագէտի լուսանկարները:

Համագործակցութիւնը մակարդակով միաւորեցրելու կարգադրութիւնը «Կարգադրութիւն», երկուշաբթի 5:00ից, «Յակոբ Տէր Մելիքեան» բաժնետիրութիւնը: Նկարչական ցուցահանդէս, «Ջեքիթա Պէյ-րոպ», «Նըքմէ» հրատարակչութիւնը: Փոլ կիրակոսեանի լուսանկարներու ցուցահանդէս, «Էմմալիս» ցուցասրահին մէջ:

## ՀԵՌԱՏԵՍԻԼ

|                         |                    |                                                                                                    |
|-------------------------|--------------------|----------------------------------------------------------------------------------------------------|
| 15:30 - Արաբական        | 17:40 - Լիբանանեան | 18:55 - Նորատեոք                                                                                   |
| 17:00 - Լիբանանեան      | 19:00 - Արաբական   | 14:00 - Լուր                                                                                       |
| 18:00 - Վաւերագրական    | 20:00 - Արաբական   | 14:05 - Բաց նախագծի շրջանակներում                                                                  |
| 19:00 - Լուրեր          | 21:30 - Լէ Էնուէլ  | 15:00 - Հայրու                                                                                     |
| 20:00 - Սարգսիաթ        | 22:00 - Այմապիտ    | 15:20 - Մուլտիմիտի «Լեռնիկ»                                                                        |
| 21:00 - Սահրա Ղէյր      | 23:00 - Արաբական   | 15:45 - Առաջին օգնութեան դասընթաց. Սուրբորովայն                                                    |
| 22:00 - Այմապիտ         | 23:30 - Արաբական   | 16:00 - «Սիրոյ կախարհանք»                                                                          |
| 23:00 - Պուրաս, իբրիսաթ | 23:30 - Թահիթ      | 17:00 - Մարտի 20-ի յիշատակ                                                                         |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 17:30 - Կարծիք                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 18:00 - Այլուր                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 18:10 - Non-stop                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 18:35 - Տուն տունիկ                                                                                |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 18:50 - Մանուկների Աստուածաշունչ                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 19:00 - Հայրու                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 19:50 - Հեռուստաներկայացում. Գարբիէլ Սունդուկեան «Եւայլ կամ նոր Դիոգենէս», «Գիշերուան սաբրը խել է» |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 20:20 - Եթէ, իրօք...                                                                               |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 21:40 - Մայր քաղաքն 80. Տան Էրոյեան                                                                |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 22:00 - Հայրու                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 22:20 - Կէս գիշերային ձեւերնաթաց                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 23:20 - Հայրու (ռուսերէն)                                                                          |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 23:25 - Հայրու (անգլերէն)                                                                          |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 23:30 - Այլուր                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 23:40 - Երկրի ուժը                                                                                 |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 00:00 - Լուր                                                                                       |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 00:20 - Եթէ իրօք...                                                                                |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 01:00 - Լուր                                                                                       |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 01:35 - Non stop                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 01:45 - Նորատեոք                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 01:55 - Նորատեոք                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 02:00 - Լուր                                                                                       |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 02:05 - Բաց նախագծի շրջանակներում                                                                  |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 03:00 - Հայրու                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 04:00 - «Էնդհանուրի առեղծուածը»                                                                    |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 04:35 - «Լեռնիկ»                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 05:00 - Non stop                                                                                   |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 05:25 - Կարծիք                                                                                     |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      | 05:50 - Այլուր                                                                                     |

|                         |                    |                                                 |
|-------------------------|--------------------|-------------------------------------------------|
| 15:30 - Արաբական        | 17:40 - Լիբանանեան | 18:55 - Նորատեոք                                |
| 17:00 - Լիբանանեան      | 19:00 - Արաբական   | 14:00 - Լուր                                    |
| 18:00 - Վաւերագրական    | 20:00 - Արաբական   | 14:05 - Բաց նախագծի շրջանակներում               |
| 19:00 - Լուրեր          | 21:30 - Լէ Էնուէլ  | 15:00 - Հայրու                                  |
| 20:00 - Սարգսիաթ        | 22:00 - Այմապիտ    | 15:20 - Մուլտիմիտի «Լեռնիկ»                     |
| 21:00 - Սահրա Ղէյր      | 23:00 - Արաբական   | 15:45 - Առաջին օգնութեան դասընթաց. Սուրբորովայն |
| 22:00 - Այմապիտ         | 23:30 - Արաբական   | 16:00 - «Սիրոյ կախարհանք»                       |
| 23:00 - Պուրաս, իբրիսաթ | 23:30 - Թահիթ      | 17:00 - Մարտի 20-ի յիշատակ                      |
| 23:30 - Թահիթ           | 23:30 - Թահիթ      |                                                 |



ԱԿՍԱՐԿ՝ 3. Մ. Ը. Մ. - 3. Մ. Մ.  
ՄՐՑՈՒՄԻՆ ԱՌԻՊՈՎ

### Ո՞Վ ԷՐ ԵՐԵԿՈՒԱՆ ԱՍՏՂԸ

Երոպայի մէջ սովորութիւն դարձած է ֆութպոլի իւրաքանչիւր մրցումէ ետք ընտրել օրուան աստղը: Առիթով մը, Մարտի 1-Փարիզ Սէն Ժերմէն գագաթի ձախառումէն ետք երբ հարց տրուեցաւ հանրածանօթ թղթակից Թիէրի Ռոլանի, թէ ո՞վ էր օրուան աստղը, ան ծպտալով պատասխանեց. «Վելոտրոմ»-ի (Մարտի 1-ի դաշտը) փնւալիքը...

Շատ հաւանաբար միեւնոյն տրամաբանութեամբ պէտք է մօտենայլ Հ. Մ. Ը. Մ. - Հ. Մ. Մ. երէկուան գագաթի ձախառումին եւ ըսել, որ օրուան աստղը աներկրայօրէն հանդիսացաւ Հ. Մ. Ը. Մ-ի փնւալիքը:

Տաղանդաւոր արձակագիր-վիպագիր մը հանգիստ հատոր մը կրնայ գրել այս աննման համակիրներուն մասին: Ոչ թէ պարզապէս անոնց խոսքերը քննարկել, այլ՝ ռզիկին, կորովին, համոզումին:

Ուղղակի հարսանիք էր երէկ թրիպիւնին մէջ: Փողեղախումբ, տեղի-չունա, հրավառութիւն, եռագոյն ներկուած մաւրներ, եռագոյն գծուած դէմքեր, եռագոյն յատուկ տարազներ, տարբեր չափի հապարաւոր դրօշակներ, ի՞նչպէս վերջակէտ դնել... Հապա՞ երգերը, ապագային-յեղափոխական երգացանկը, զոր մեկնաբանեցին անոնք այնքա՞ն խրոխտ եւ ուրախ ռզիկով: Մէկ խօսքով՝ բառին ամբողջական առումով թնդաց, թնդացուցի՞ն դաշտը եւ անոր շրջակայքը: Անշուշտ այս փառքէն անմասն չմնացին քաղաքապետարանի շէնքերը եւս, որոնք առանձին թրիպիւն մըն էին, ինչպէս միշտ: Հարսանիք էր նաեւ դաշտէն դուրս, մրցումէն ետք, Պուրձ Համուտի մեր փողոցներուն եւ Մեթնի ու Պէյրոտի այլ շրջաններու մէջ:

Կեցցե՛ն մեր աննման համակիրները, որոնք անգամ մը եւս փաստեցին իրենց գերակայութիւնը բոլորէն: Պատահա՞ծ է արդեօք Լիբանանի Բ. դասակարգին մէջ նման երեւոյթ: Կը կասկածինք: Հ. Մ. Ը. Մ-ի համակիրները կապմ ու պատրաստ «ներկայ» արձագանգեցին իրենց ուղղուած կոչին: Անոնք ռզի ի բոնի տէր կանգնեցան խումբին, որ իր կարգին եղաւ անպուգական եւ Նոր Տարուան առիթով յաւազոյն նուէրը կատարեց իր բազմաազար համակիրներուն: Հ. Մ. Ը. Մ-ի համակիրները չպլացան իրենց նուէրը խումբին, իսկ խումբը ամենայն պնդութեամբ փոխադարձեց նուէրին: Սիւս գեղեցիկ երեւոյթ մը, զոր քիչեր միայն ատակ կ'ըլլան իրագործելու այս երկրին մէջ: Պէտք է պահել այս հարստութիւնը, դրամազուլիսը: Պիտի պահե՛նք անպայման:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ մեր բոլոր համակիրներուն, մարտիկներուն եւ պատասխանատուներուն: Բոլորս մէկ մարմին դարձած՝ կերտեցինք Հ. Մ. Ը. Մ-ի ֆութպոլի յաջող օրերը, տարին աւարտելով առանց պարտութեան, նոյնիսկ առանց հաւասարութեան: Գաղափարական միեւնոյն համոզումով ու հաւատքով, միութենական անխախտ մօտեցումով ու հասկացողութեամբ, Հ. Մ. Ը. Մ. ականի վայելչ անկուն կամքով միասնաբար պիտի շարունակենք այս յաղթական երթը, մեր խումբին վերադարձելով երբեմնի փառքի օրերը, որուն արժանի է ան հարիւր տոկոս, այնքան ատեն որ իր կողքին ու ետին ունի այսպիսի ամրակոտ փառանք մը, այնքան ատեն որ ան չի դադրիր մարզական հպօր բանակ մը ըլլալէ:

Հ. Վ.

ՓԻՆԿ ՓՈՆԿ

### ԱՄՇԻԹԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ 3. Մ. Ը. Մ. ՇԱՐՅԱՒ ԵՐԵՔ ԲԱԺԱԿՆԵՐ

Ամբիթի մէջ տեղի ունեցած փնկ փոնկի մրցաշարին, որուն ընթացքին տեղի ունեցան տարիքային տարբեր տեսակի մրցաշարքեր, Հ. Մ. Ը. Մ-ի մարտիկները շահեցան երեք բաժակներ: 91-92ի ծնունդներուն Սիւ Պուրջոյեան շահեցաւ բաժակը, աւարտականին պարտութեան մատնելէ ետք Հ. Մ. Ը. Մ. ական Հրակ Պետոյեանը (2-0): 85-86-87ի ծնունդներուն Հ. Մ. Ը. Մ. ական Ռալֆ Էտիէն տիրացաւ տիտղոսին, աւարտականին պարտութեան մատնելէ ետք Ռոնի խորին (3-0): 84ի ծնունդը եւ վար դասակարգին, Ռափիկ Ենեմեան տիրացաւ տիտղոսին 3-2 արդիւնքով պարտութեան մատնելով Մոհամէտ Քարպուրը: 89-90ի ծնունդը դասակարգին, Մաթ Փոյատեան հարաւանայ անոր որ հասաւ աւարտականին, սակայն կրցաւ շահիլ բաժակը, 2-0 արդիւնքով պարտութիւնը կրելէ ետք Միշէլ Աքիբիէն: Ամբիթի մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հ. Մ. Ը. Մ. ական՝ Հայկ խաչերեան, Արմէն Գոյաբճեան եւ Սահակ Փայեան:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ


## Հ.Մ.Ը.Մ. - Հ.Մ.Մ.՝ 3-0



Հ.Մ.Ը.Մ-ի մարտիկները, որոնք մրցումէն ետք իրենց յաղթանակը կը տօնեն համակիրներուն հետ

Լիբանանի ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 9րդ

պիւններուն մէջ, որոնց դիմաց Հ.Մ.Մ-ի համակիրները հալիւ



Մրցումէն տեսարան մը



Հ.Մ.Ը.Մ. համակիրները, որոնք խիտ շարքերով լեցուցած էին իրենց տրամադրուած թրիպիւնները (Լուսանկարները՝ ՖՈՒՑՕ ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ. 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հ.Մ.Մ-ը, Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ: Գագաթի այս ձախառումին, մրցումէն աւելի ուշագրաւ եղաւ Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներուն ներկայութիւնը. անոնք աւելի քան 6 հազար հոգիով խոնուած էին թրի-

կու հարիւր հոգի կը կազմէին, լիբանանեան բանաւոր մամուլն աւտնեց Հ.Մ.Մ-ը, ինչ իսկ հաստատումով: Ինչ կը վերաբերի մրցումին, ապա Հ.Մ.Ը.Մ. եղաւ տիրաւոր առումը մրցումը երկուստեք եղաւ ոչ շատ բարձր մակարդակի, որովհետեւ յայտնապէս խումբերը պրկուած էին, իսկ

կեանէն, երբ հեռուէն տրուած գետնէն զօրաւոր հարուած մը փրկուեցաւ բերդապահ Սագոյի կողմէ: Մրցումին վերջին 15 վայրկեաններուն Հ.Մ.Ը.Մ-ի տղաքը փորձեցին բարձրացընել հաշիւը՝ բազմաթիւ յարձակումներով, սա-

կայն ապարդիւն: Այս կարեւոր յաղթանակէն ետք, Հ.Մ.Ը.Մ. առանձնացաւ պարագլուխի դիրքին վրայ, 8 կէտի առաւելութիւն ձեռք ձգելով իր անմիջական մրցակիցներուն՝ Հ.Մ.Մ-ի եւ Ռասիկի վրայ:

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

|                                  |              |
|----------------------------------|--------------|
| Ռասիկ - Նահտա Պար Էլիաս          | 3-1          |
| Շապաթ Թրիփոլի - Մահապպա          | 3-0          |
| Հըր. Մաժո. Այնճար - Թատ. Նապաթիէ | 1-1          |
| Հ.Մ.Ը.Մ. - Հ.Մ.Մ.                | 3-0          |
| Իսլահ Պըրժ Ծիմալի - Ահլի Սայտա   | 5-1          |
| Շապաթ Խիամ - Ռիատա Ուալ Ատապ     |              |
| (Խիամ դաշտ չճերկայացաւ)          |              |
| ԴԱՍԱԿԱՐԳԻ                        | ՄՐՑ. ԿԵՏ     |
| 1. Հ.Մ.Ը.Մ.                      | 8 24 (27-5)  |
| 2. Հ.Մ.Մ.                        | 8 16 (21-9)  |
| 3. Ռասիկ                         | 9 16 (14-11) |
| 4. Շապաթ Թրիփոլի                 | 8 14 (12-8)  |
| 5. Իսլահ Պըրժ Ծիմալի             | 7 12 (12-5)  |
| 6. Ռիատա Ուալ Ատապ               | 7 10 (7-5)   |
| 7. Մահապպա                       | 8 10 (14-15) |
| 8. Իթթիմահի                      | 8 10 (14-16) |
| 9. Նահտա                         | 8 9 (10-15)  |
| 10. Թատ. Նապաթիէ                 | 9 9 (10-16)  |
| 11. Հըրրիէ                       | 8 7 (6-13)   |
| 12. Ահլի Սայտա                   | 8 6 (13-19)  |
| 13. Խիամ                         | 8 3 (4-30)   |

### ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵԹՊՈՒԼ

### 3.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ԱՊԱՅՈՎԵՑ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ԻՐ ՏՈՄԱԸ

Լեռնայի խրախուսի նահանգէն ներս տեղի ունեցող Լիբանանի Դ. դասակարգի տղոց ախոյեանութեան Բ. հանգրուանին իր կատարած վերջին մրցումին, երէկ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս 94-39 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը՝ Ժէտէրը, ապահովեց Լիբանանի Դ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն իր տոմարը:

●ԼԻԲԱՆԱՆԻ տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան 7րդ հանգրուանին իր կատարած մրցումին, Շաքաթ օր. Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական կապ մը կրեց եղանակի իր 5րդ պարտութիւնը, իր հիւրէն՝ Սէն Ժոյէֆէն, 72-61 արդիւնքով: Հակառակ անոր որ Ա. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. 35-24 կը յառաջանար, սակայն երրորդ ժրթընի մրցակից կապ մը յառաջացաւ 22-7 արդիւնքով: Հ.Մ.Ը.Մ-ի յաջորդ մրցակիցն է՝ Անուպիս Ռիատի: Մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի՝ 4 Յունւար 2003ին, Անուպիսի դաշտին վրայ, ժամը 17:00ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ճաշկերոյթ Պարահանդէս

Կիրակի, 5 Յունուար 2003  
Երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ  
PHOENICIA դահլիճին մէջ  
Երգահանդէս

Երկուշաբթի, 6 Յունուար 2003,  
Երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ,  
UNESCO-ի սրահին մէջ

Schwarzkopf PROFESSIONAL

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelix գրախանութ. Անթիլիաս Աղբալեան մարզաձալութային կեդրոն, Արզիւր - Գամազգային գրախանութ. Շաղոյեան կեդրոն, Պուրձ Գամուտ - Տիպոթէր Գեկա, Պուրձ Գամուտ - Սթիւտիօ Վաչէ. Երկաթ կամուրջի մօտ. Գաճըմ - Գամազգային «Կոմիտաս» գրախանութ. Զոքաք Էլ Պաթ - Գամազգային Լեռն Շաք Կեդրոն, Պուրձ Գամուտ.

**OPTIONS - KASLIK**

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԳԻՇԵՐԸ  
ԱՆՅՈՒՅԵՔ ԽԱՆՂԱՎԱՌ ՄՅՆՈՒՈՐՏԻ ՄԵՋ  
Մասնակցութեամբ՝ երգիչներ  
ԵՄԻՐ ԵՆՉՊԵՒԵԻ ԵՒ ՃԱՏԻ ԻՊՊԱՇԻՄԻ  
ԸՆԿերակցութեամբ արաբական պարուսի՝  
**ՍՈՒՐԱ ՍԱԼԱԷԻ**

Բաց՝ ձաշ եւ խմիչք + ջրօրոն  
+ առաւօտեան ընձիթ

Տեղերը ապահովելու համար դիմել  
**03 - 565142**

